


Եղիշէի մասին ալ նոյն ոգով և ոճով վարուեցան ոմանք՝ զինքը է դարուն՝
վճռելով. ուրիշներ՝ դարձեալ լեզուն ոչ ոսկեղարեան նկատելով՝ Զ դարուն՝ հեղինակ
շինեցին, որոնց պատասխանը լաւ կերպով տրուեցաւ, թէ Եղիշէի լեզուն և բո-
վանդակ պատմութեան մէջ միայն Պարսիկ ազդեցութիւն կը գտնենք. մինչ է դարուն
արար զօրութիւնը որ արդէն պարսիկը նուաճեր էր, Հայուն քով զգալի պիտի ըլլար.
այդ հեղինակն ուրեմն որուն քով պարսիկ բառեր և պարսիկ ազդեցութիւն կը գտնու-
նենք՝ միայն Ե դարուն ապրած մէկը պէտք է ճանչնանք, այսինքն այն դարուն՝ ուր
պարսից իշխանութիւնը դեռ կանգուն էր:

Այս պատճառներով Մատենադրութիւնս աւանդական կարծիքը պահեց, ըստ
որում Մովսէս և Եղիշէ Ս. Թարգմանչաց Փոքր կոչուած դասէն են, հետեւաբար Ե
դարուն: Համառօտ տեղեկութիւնս տեղւոյս համար, յուսանք բաւական ըլլայ ըն-
թերցողները ծանօթացնելու Ազգային մատենադրութեան նկատմամբ օրուանս հար-
ցին, աւելին՝ կարելի է կարգաւ վերել նշանակած թերթերուն մէջ:

Մեր սրտին ամենէն աւելի եռանդուն մաղթանքն և վառ իղձն այն է՝ որ Հայ
պատանին սորվի և ճանչնայ իր նախնեաց փառաւոր անցեալը, և բոլոր հոգով
ջանայ միշտ անոնց մեծութեան նախանձաւոր հանդիսանալ և ըլլալ արժանաւոր
յաջորդ և ժառանգ:

Հ. ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍԵԱՆ

1. «Հանդէս Ամսօրեայ» 1931 թիւ 1-2 հւն. - 2. «Անահիտ», 1931, թ. 3-4, էջ 5, ս. 1. - 3. «ժառանգ» լրագիր, 1931, Ապրիլ 27, թիւ 7969. և «Բազմավէպ»՝ 1931, էջ 195.



ՀԻՆ ՅՈՒՇԱՏԵՏՐԻ ՄԸ ԷՁԵՐԷՆ

ԲԱՐԻ ՕՐԻՆԱԿԸ

Ձեռն ի ծընօտ մըտահոգ
Նըստած ափիդ ես քովիկ՝
Դիտեմ աչքովս ու մըտօք
Ո՛վ գետ, անդարձ քու ալիք:

Այդպէս կ'անցնին շուտափոյթ
Կեանքիս օրերն անուշակ,
Կը խամրին այդպէս առոյգ
Մանկութեան գեղն ու հասակ:

Թրգ. Հ. Թ. Թովմասյան

Բայց քու ալիք սըրընթաց
Երբ կը վազեն դէպ ի ծով,
Կ'ոգեւորեն մօտակայ
Դաշտեր ծաղկամբ ու պըտղով:

Իցի՛ւ ես ալ նըման քեզ
Արդիւնքներով զարդարուն
Երթամ պատուով աշխարհէս
Յաւիտենից ծովն անհուն:

CAPELLINA

ՎԱՆՔԻ ԾԱՊԻԿԸ

Վանքի ծաղիկը սրբազան
Մեղամաղձոտ ու գեղեցիկ
Հեզ ու խոնարհ սրտի նըման
Կը բողբոջի առանց անուան:

Ոչ մէկ փափուկ ձեռք պըճնասէր
Ձայն կը դընէ կուրծքին վըրայ.
Ոչ մէկ դեղին յայրատ աչքեր
Կը խոնարհին անոր վըրայ:

Սըրբութեան մէջ խորհըրդաւոր
Նոճիներու շուքով պատուած
Ինչպէս տիկին մը սըզաւոր
Կ'աղօթէ միշտ առանձնացած:

Մի խըռովէք խաղաղութիւնն,
Ո՛վ աղմուկներ աշխարհական,
Նա ողջախոհ կոյսն է արթուն
Ձեռքը լապտերն իմաստութեան:

Դէպ ի երկինք, դէպ ի տաճար
Կապոյտ հայեացքն է հեծեծուն,
Իր հաւատքին մէջ բոցավառ
Ամենասուրբ գեղեցկութիւն:

Մըրմունջն անոր հոգեխըռով
Արեւու երզն է թըրթըռուն.
Շարականի ափերուն քով
Ամէն ծագող առաւօտուն:

Սըրբավայր մ'է միշտ իր ածուն
Միւսներէն գատ խաչի մը քով
Կը հաղորդուի խաչեցելոյն
Մեծ բալի պէս արտասուքով:

Ու լոյս մը ջինջ աստղի նըման
Կը ցոլանայ ծոցին մէջէն,
Հոտը կու գայ անմահութեան
Իր ըսպիտակ ծիրանիէն:

Թաքուն դիւթանք մ'ունի՝ ինչպէս
Հըրաշք աղջիկ մը վիպական.
Ու քանինէր զայն հոգեպէս
Ե՛ւ կը տեսնեն եւ կը մոռնան:

Ամէն Ձատկի լուսաբացին
Կը զգենու նոր հանդերձ մը սուրբ.
Ձայն իր ձեռքովն Աստուած կըրկին
Առանց կարի կը հիւսէ նուրբ:

Այդ կիրակին Սուրբ Ղազարու
Հաւատքի օրն է Յարութեան,
Այնտեղ կու գան նորոգուելու
Աշխարհական ու վանական:

Ամէնքը նոր մաս մը կ'առնեն
Իր հոգիէն չընաշխարհիկ.
Կ'եղբայրանան ու կը բաժնեն
Սուրբ Հացին հետ լոյս ու ծաղիկ:

Ո՛վ երկնային հոգեփոխում
Ձըւարթ զանգին ձայնը կու գայ,
Նորէն մայիս, նորէն զարթում ...
Ալէլուիա ալէլուիա:

Հարսանիքի մը պերճանքով
Վարդեր կ'ելլեն պատերուն տակ
Ու կը լեցուի նոր հըմայքով
Վանքի ծաղիկն անմեռունակ:

Բոցավառուած շուշանի պէս
Կարծես բաժակ մ'է արբումի,
Բոյր կը բաշխէ, կայծեր անկէզ
Իր թերթերէն ապրեշումի:

Աներեւոյթ եւ իրական
Ամէն կողմն է եւ ոչ մէկ տեղ,
Ձերդ յիշատակ մը վանական
Սըրտերուն մէջ մասունքի տեղ:

Հաւատք եւ լոյս եւ սէր անհուն
Յորջորջեցին շատերը զայն,
Դըրին անունն Համեստութիւն
Բայց նէ մընաց առանց անուան:

Հ. ՎԱՏԱՆ ՅՈՒՇԱՆՆԷՍԵԱՆ

Բարիկ
3 փետրուար 1932